

ՍԱՂՄՈՍ 107

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ մարդկանց փրկում է բազմաթիվ նեղություններից <u>MT ներածությունն չկա</u>	Գոհություն ՏԻՐՈՋԸ Իր մեծ փրկագործությունների համար	Մի խումբ գոհություն է մատուցում ուխտավորների համար	Աստծո բարության փառաբանություն	Աստված Ապաստարան է ցանկացած վտանգների մեջ
107:1-3	107:1-3	107:1-3	107:1-3	107:1 107:2-3
107:4-9	107:4-9	107:4-9	107:4-9	107:4-5 107:6-7 107:8-9
107:10-16	107:10-16	107:10-16	107:10-16	107:10-12 107:13-14 107:15-16
107:17-22	107:17-22	107:17-22	107:17-22	107:17-18 107:19-20 107:21-22
107:23-32	107:23-32	107:23-32	107:23-32	107:23-24 107:25-27 107:28-30 107:31-32
107:33-38	107:33-38	107:33-38	107:33-38	107:33-34 107:35-36 107:37-38
107:39-43	107:39-43	107:39-43	107:39-42 107:43	107:39-40 107:41-42 107:43

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հավանական կապ կա Սաղմոս 105, 106 և 107-ի միջև (այսինքն՝ միևնույն ներածական արտահայտությունը): Չնայած որ սրանք բաժանված են գրքերի բաժնով, դրանց թեմատիկան և տերմինաբանությունը կապված են իրար: LXX ավելացնում է Գիրք 1-ին առանձնահատուկ բացման ձև՝ «Ալելուիա»:

1. Սաղմոս 105 առնչվում է Իսրայելի ելիցի փորձառության հետ
2. Սաղմոս 106 առնչվում է Բաբելոնյան գերության ցավոտ դեպքի հետ
3. Սաղմոս 107 խոսում է վերականգնման մասին

Բ. Սաղմոսները մեկնելիս կարևոր է, որ փորձենք հասկանալ պատմական միջավայրը: Սաղմոս 107:1-3 օգնում է մեզ հասկանալու, որ սա պատմում է Բաբելոնյան գերությունից Աստծո կողմից Իսրայելի ազատագրման մասին:

Գ. Այս Սաղմոսում կրկնվող մի ձևաչափ կա, որը սկսում է Սաղմոս 107:4-ում և շարունակվում մինչև 32 համարը: Կան մի քանի կրկնվող նմանօրինակ կրկներգեր: Դրանցից մեկն է. «Նրանք իրենց նեղության մեջ Տիրոջը աղաղակեցին», Սաղմ. 106:7,13,19,28: Այս արտահայտությունը նման է Իսրայելի փորձառությանը Դատավորների շրջանում:

Դ. Մեկ այլ պարբերաբար հանդիպող կրկներգ է Սաղմ. 107:8,15,21,31: Այս կրկներգը կենտրոնանում է Իսրայելի Աստծո ուխտի հավատարմության վրա: Այս նույն հատուկ տերմինը՝ *hesed* (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ), սկսում է և ավարտվում այս Սաղմոսը: Այս հրաշալի Սաղմոսի թեման ՅԱՀՎԵԻ ուխտի հաստատ հավատարմությունն է:

Ե. Գոյություն ունի քառապատիկ փրկության ձևաչափ: Որոշ գիտնականներ կարծում են, որ սա կապված է Երուսաղեմ ճամփորդող ուխտագնացների հետ, բայց սա կարծես թե քիչ հավանական է, հատկապես #4 տարբերակի պատճառով՝ Սաղմ. 107:23-31-ում, որը առնչվում է ծովի մոտ առևտուր՝ բիզնես անելու հետ: Ավելի լավ կարելի է հասկանալ ճգնաժամից ազատվելու չորս նկարագրությունների միջոցով՝

1. անապատում կորած քարավանի գտնվելու, Սաղմ. 107:4-9
2. խորը գուրբի մեջ գտնվող բանտարկյալների ազատվելու, Սաղմ. 107:10-16
3. մինչև մահվան տանող հիվանդությունից բժշկվելու, Սաղմ. 107:17-22
4. նրանք, որ սարսափելի փոթորկի են հանդիպել ծովում, սակայն ազատվում են, Սաղմ. 107:23-31:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱԳՄՈՍ 107:1-3

¹Գոհությունն մատուցեք ՏԻՐՈՋԸ, քանի որ բարի է, քանի որ Նրա ողորմությունը հավիտյան է:

**²Թող այսպես ասեն ՏԻՐՈՉ փրկվածները,
Որոնց Նա ազատեց թշնամու ձեռքից
³Ու հավաքեց նրանց երկրներից, արևելքից,
Արևմուտքից, հյուսիսից ու հարավից:**

107:1 «Գոհությո՞ւն մատուցեք ՏԻՐՈՉԸ, քանի որ բարի է» Այս Սաղմոսն էլ սկսում է այնպես, ինչպես Սաղմոս 106, 118 և 136 (այսինքն՝ BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, սա այս Սամոսում միակ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է): Այն հիմնականում հավատարիմ հետևորդի աշխարհայացքն է: Անկախ նրանից, թե ինչ իրավիճակներում կհայտնվենք, սա այն մարդկանց խորը համոզմունքն է, ովքեր հավատում են Աստվածաշնչին, որ Աստված մեզ հետ է, Աստված մեր կողմից է և Աստված կարող է մեզ ազատել:

❖ **«քանի որ Նա բարի է»** Այս արմատը (BDB 373 II, KB 370-372) ունի լայն իմաստային դաշտ: Այստեղ, այն ինչպես շատ հաճախ, կիրառվում է ՅԱՀՎԵԻ բնավորության համար: Նա բարի է (տես՝ BDB 374, #9բ, 1 Մնաց. 16:34, 2 Մնաց. 5:13, 7:3, 30:18, Սաղմ. 25:8, 34:8, 86:5, 100:5, 106:1, 107:1, 118:1,29, 136:1, Երեմ. 33:11, Նաում 1:7): Ակնհայտ է, որ սա պարբերաբար ՅԱՀՎԵԻ հիմնական բնավորության հաստատում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

❖ **«քանի որ Նրա ողորմությունը հավիտյան է»** Սա ուխտի տերմին *hesed*-ն է: Այն հիմնականում խոսում է Աստծո հաստատուն, ուխտի հավատարմության մասին: Այս Սաղմոսը սկսում և ավարտվում է (տես՝ Սաղմ. 107:43բ) Աստծո ուխտի սիրով: Աստված ոչ միայն ուխտերը կապողը չէ, այլ նաև կառավարողը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (hesed)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏԱՅՆ ('olam)

107:2 «Թող այսպես ասեն ՏԻՐՈՉ փրկվածները» Այս «փրկվածները» ԲԱՅԸ եբրայերեն *go'el* (BDB 145, KB 169, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) բառից է: Այն հիմնականում արտահայտում է գերությունից ինչ-որ մեկի իր հարուստ բարեկամի կողմից գնվելը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ): Սա անձնական ընտանեկան նկարագրություն է, որը կիրառվում է նկարագրելու Աստծուն ամենամտերմիկ և կարևոր մարդկային փոխհարաբերություններում:

Աստծո ժողովուրդը կանչված է խոսելու Աստծո ողորմությունների մասին: Համատեքստում սա մեկ այլ տիեզերական թեմա է (տես՝ Սաղմ. 107:8,15,21,31):

«Ասեք» (BDB 55, KB 65) բառը *Qal* ԱՆԿԱՏԱՐ է, կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով: Այս Սաղմոսն ունի այս քերականական ձևերից տասնմեկը (այսինքն՝ Սաղմ. 107:2,8,15,21,22 /երկու անգամ/, 32 /երկու անգամ/, 43 /երկու անգամ/): Սա ենթադրում է տաճարի երկրպագություն:

❖ **«որոնց Նա ազատեց թշնամու ձեռքից»** Սաղմոս 107:3-ի պատճառով սա նկատի ունի ասորական և բաբելոնյան գերությունների: Նորոգության համար աղոթքը, որը գտնվում է Սաղմ. 106:47-ում և Սաղմոս 107-ում, կարծես թե այդ աղոթքի իրականացումն է:

«Ձեռք»-ի դարձվածքի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ:

107:3 «հարավից» Սա իրականում «ծով» բառն է (տես՝ JPSOA): «Ծով» (BDB 410) տերմինը և «հարավ» տերմինը (բառացի՝ «աջ ձեռք», BDB 411 I) Եբրայերենում հեզվում են միևնույն կերպ:

Սրանք կողմնացույցի չորս գլխավոր կողմերն են, որոնք մատնանշում են տիեզերական նորոգություն:

Անգլերենի արդի թարգմանություններից շատերը շտկում են «ծով»-ը «հարավի», քանի որ «արևմուտքը» բառն արդեն իսկ նշվել է: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 384) «ծով» բառը գնահատում է “A” (շատ մեծ հավանականություն): Եթե բնագիր տեքստը լիներ «ծով», ապա այն նկատի կունենար Միջերկրականի կղզիները, որտեղ Աստծո ժողովուրդը քշվեցին որպես բանտարկյալներ և գերիներ:

Ուշադրություն դարձրեք, որ Սաղմոս 107-ում ՅԱՀՎԵԻ փրկվածներին «հավաքելը» (BDB 867, KB 1062, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Եսայի 43:5) Սաղմ. 106:47-ի աղոթքի պատասխան է (BDB 867, KB 1062, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 107:4-9

⁴Նրանք թափառեցին անապատում,

Ամայի ճանապարհին . բնակվելու քաղաք չգտան:

⁵Սոված ու ծարավ լինելով՝

Նրանց հոգին իրենց մեջ նվաղում էր:

⁶ՏԻՐՈՋՆ աղաղակեցին իրենց նեղության մեջ,

Եվ Նա փրկեց նրանց իրենց վշտերից:

⁷Ու նրանց ուղիղ ճանապարհով առաջնորդեց,

Որպեսզի բնակելի քաղաք գնան:

⁸Երանի՛ թե մարդիկ գոհություն մատուցեն ՏԻՐՈՋՆ

Իր ողորմության և այն հրաշալի գործերի համար,

Որ Նա արեց մարդկանց որդիների համար .

⁹Քանի որ Նա հագեցնում է կարոտյալ անձին,

Ու անոթի հոգին բարությանը է լցնում:

107:4 «Նրանք թափառեցին անապատում, ամայի ճանապարհին» Ոմանք կասեն, թե սա ելիցի ակնհայտ ակնարկ է, սակայն, Սաղմոսի մնացած մասը չի համապատասխանում ելիցի շրջանի հետ: Ուստի, կարծում եմ, որ սա նկարագրված չորս ճգնաժամային իրավիճակներից առաջինն է, որից Աստված ազատում է Իր ժողովրդին: Տես՝ Համատեքստային Հասկացություններ, Ե .

❖ **«բնակվելու քաղաք չգտան»** Այս բառախաղ՝ «բնակեցված քաղաք» տերմինի շուրջ, կարելի է գտնել այս Սաղմոսի մի քանի մասերում (տես՝ Սաղմ. 107:7,36): Հավանաբար սա ակնարկում է Երուսաղեմը (տես՝ Ես. 62:12) և Խոստացյալ Երկիրը, սակայն առաջին հերթին սա խոսում է ճամփորդների համար, ովքեր իրենց ճամփորդության ժամանակ գտնում են հանգիստ, պաշար, և ապահովություն:

107:5 «Հոգի» (“*nepshesh*”, BDB 659, տես՝ առցանց Ծննդ. 35:18-ի գրառումը) բառը արտահայտում է կյանքի ու ժ հանդիսացող թթվածին շնչելը: Այս Սաղմոսում այն կիրառվում է մի քանի անգամ:

1. Սաղմ. 107:5 – նրանց հոգին իրենց մեջ նվաղում էր
2. Սաղմ. 107:9 – կարոտյալ անձին
3. Սաղմ. 107:9 – անոթի հոգին
4. Սաղմ. 107:18 – նրանց անձը զգվեց բոլոր տեսակի կերակուրներից
5. Սաղմ. 107:26 – նրանց անձերը հալումաշ են լինում

Սրանցից յուրաքանչյուրը նկարագրում է հուսահատության և վիստության մեջ՝ մահվան շեմին գտնվող անձի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHEESH

107:6,13,19,28 «ՏԻՐՈՉՆ աղաղակեցին իրենց նեղության մեջ» Աստծուն աղաղակելու և Նա նրանց ազատելու այս մոտեցումը, որը որդեգրված Աստծո ժողովրդի կողմից ճգնաժամի ընթացքում, հիշեցնում է Դատավորների շրջանը:

107:6 «Ու նրանց ուղիղ ճանապարհով առաջնորդեց» Ուղիղ ճանապարհի այս հասկացությունը արտացոլում է եբրայերենի «երկու ճանապարհ» դարձվածքը (տես՝ 2 Օր.30:15-20, Սաղմ. 1:1, Մատթ. 7:13-14): ՅԱՀՎԵԻ նկատմամբ հավատքի ու հավատարմության կյանքը նկարագրվում է որպես՝

1. ուղիղ ճանապարհ
2. բարձր ճանապարհ
3. հարթ ճանապարհ
4. խոչընդոտներից զերծ ճանապարհ

Ամբարշտի ապրելակերպը ճիշտ հակառակն է՝ լի նեղությամբ և խնդիրներով:

Եսայի մարգարեն հաճախ է խոսում ՅԱՀՎԵԻ կողմից Իր ժողովրդի համար հատուկ ճանապարհ պատրաստելու մասին, որով նրանք կվերադառնան գերությունից (տես՝ Եսայի 20:7, 35:7-8, 40:3-4, 42:15-16, 43:19-20, 49:10-11, 57:14, 62:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱԳԱՐՀԸ

107:8 «Երանի՛ թե մարդիկ գոհություն մատուցեն ՏԻՐՈՉՆ Իր ողորմության համար» ԲԱՅԸ (BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) հանդիպում է Սաղմ. 107:8,15,21,31-ում: Այստեղ դարձյալ կրկնվող կրկներգ է Իր որդիների կյանքում Աստծո հայտնված սիրո հրաշալի ուխտի մասին: Անգամ հուսահատության ժամանակ Նրա հավատարմությունը հաստատ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

❖ **«Ու այն հրաշալի գործերի համար, որ Նա արեց մարդկանց որդիների համար»** Սա հիմնականում վերաբերում է Աստծո շնորհքի գործերին, որոնք Նա կատարեց Իր ժողովրդին փրկելիս (տես՝ Սաղմ. 107:24, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԵՄԵՆՆԻ ԲԱՆԵՐ): Այս արտահայտությանը կարելի է երկու կերպ նայել: Մեկը շեշտադրում է Աստծուն՝ որպես կյանքի գլոբալ պահապան, բոլոր մարդկային էակների համար հոգացող: Սակայն, կարծում են այս արտահայտության ավելի ճիշտ մեկնությունն այն է, որ Իսրայելը պետք է լիներ աշխարհի համար Աստծո գործերի վկան: Սա լավագույնս համապատասխանում է Սաղմ. 107:2-ին և համընդհանուր շեշտադրությանը, ինչպես և Սաղմոսացի այս բաժնում գտնվող շատ Սաղմոսների առանձնահատկություններին: Իսրայելը նախատեսված էր լինելու քահանաների թագավորություն, որպեսզի առաջնորդեր ամբողջ աշխարհին դեպի Աստծուն (տես՝ Ելից 19:5-6, 3 Թագավորաց 8, Եզեկ. 36:22-36):

107:9 «Քանի որ Նա հագեցնում է կարոտյալ անձին» Սա կարող է նկատի ունենալ Աստծո կողմից ֆիզիկական փրկությանը, ինչ-որ հատուկ դեպքից, որով անցնում էին Սաղմ. 107:4-9-ի մարդիկ, կամ էլ էքստրապոլացիա է արված ավելի լայն հոգևոր իմաստով: Այս Սաղմոսը, որպես մի ամբողջություն, կարելի է հեշտությամբ ընդհանրացնել այն խնդիրների կտրվածքով, որոնց հետ բախվում են բոլոր մարդիկ Ծննդոց 3-ից հետո, սակայն հատկապես Աստծո ժողովուրդը, քանի որ նրանք վստահում են Տիրոջը և փրկվել են լինելու անհավատ աշխարհի համար Աստծո գործության և սիրո վկան:

Այս համարի առաջին տողը կիրառում է *nepshesh* արմատը, հաճախ ստացացվելով «անձի» կամ «հոգու» հետ՝ հատուկ իմաստով, որը կապված է «կոկորդ» արմատի ստուգաբանության հետ: Հետևաբար, թարգմանված է «չորացած կոկորդ» կամ «ծարաված կոկորդ»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. NEPHEESH

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 107:10-16

¹⁰Ովքեր խավարի ու մահվան շուքի մեջ էին նստում՝

Տառապանքով ու երկաթով կապված,

¹¹Քանի որ Աստծո խոսքերին ընդդիմացան

Ու անարգեցին Բարձրյալի խորհուրդը:

¹²Նա էլ նրանց սիրտը աշխատանքով խոնարհեցրեց .

Ընկան, ու ոչ ոք չկար, որ օգներ:

¹³Ապա ՏԻՐՈՉՆ աղաղակեցին իրենց նեղության մեջ,

Ու նրանց փրկեց իրենց տառապանքներից:

¹⁴Նրանց խավարից ու մահվան շուքից հանեց

Ու նրանց կապանքները կտորատեց:

¹⁵Երանի՛ թե մարդիկ գոհություն մատուցեին ՏԻՐՈՉԸ

Իր բարության ու Իր հրաշալի գործերի համար,

Որ մարդկանց որդիների համար կատարեց .

¹⁶Քանի որ պղնձե դռները փշրեց

Ու երկաթե նիզերը խորտակեց:

107:10 «Ովքեր խավարի ու մահվան շուքի մեջ էին նստում» «Մահվան շուք» (BDB 853) տերմինը կիրառվում է Սաղմ . 23:4-ում և նշանակում է «թանձր խավար» (BDB 161 ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 853): Այն կարող է հասկացվել որպես կյանքի մեծագույն ճգնաժամ կամ անձի մահվան շեմին գտնվելը: Այս մասնավոր դեպքում ակնհայտ է, որ խոսում ենք բանտարկյալների մասին, ովքեր պահվում էին ամենախավար ու խորը գուբերում (կամ հավանաբար գերեվարվածներին հատուկ ընդհանուր նկարագիր):

Սա ազատագրման չորս հավանական սցենարներից երկրորդն է: Տես՝ Համատեքստային Հասկացություններ, Ե .

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԹԱՆՁԻ ԽԱՎԱՐ

107:11 «Քանի որ Աստծո խոսքերին ընդդիմացան» Սա շատ կարևոր արտահայտություն է: Այս ճգնաժամերը, որոնք սպառում էին Աստծո ժողովրդին, Աստծո գործության կամ Նրա սիրո պակասի պատճառով չէին, այլ Նրա դեմ մարդկանց գիտակցված ապստամբության (տես՝ Սաղմ . 107:17,34): Չնայած որ սա չի ձևակերպվում բոլոր չորս հավանական սցենարներում, ակնհայտ է, որ Իսրայելին պատահած խնդիրները կապ ունեն ուխտի դեմ նրանց մեղքի և ապստամբության հետ (տես՝ Ղևտացիների 26 և 2 Օրինաց 27-30):

❖ **«Բարձրյալ»** Այս Սաղմոսն Աստծո համար մի քանի անուն է կիրառում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Ա, Բ, Դ):

1. ՅԱՀՎԵ – Սաղմ . 107:1,6,8,13,15,19,21,24,28,31,43
2. Էլ – Սաղմ . 107:11
3. Բարձրյալ (*Էլիոն*, BDB 751) – Սաղմ . 107:11

3-րդ տարբերակը ամենահաճախ է կիրառվում ոչ իսրայելացիների կողմից (տես՝ Ծննդ . 14:19, Թվոց 24:15): Մովսեսը այն կիրառվում է 2 Օր . 32:8-ում (LXX) ՅԱՀՎԵԻ կողմից երկիրը ազգերի բաժանելու մեջ: Այս Սաղմոսում այս անվան կիրառությունը ավելացնում է գրականության այս գլուխգործոցի տիեզերական լինելու փաստը:

107:12 «Նա էլ նրանց սիրտը աշխատանքով խոնարհեցրեց» Հնարավոր է սա նկատի ունի՝

1. Ծննդոց 3
2. Ելից 5
3. Կյանքի խնդիրների նկարագրությունը

❖ «ոչ որ չկար, որ օգնէր» Այս փոքրիկ արտահայտությունը հաճախ կիրառվում է ուրիշ աստվածների օգնելու անկարողության համար (տես՝ 4 Թագ. 14:26, Սաղմ. 22:11, 72:12, Ես. 63:5): ՅԱՀՎԵՆ հաստատում է, որ «Զկա ուրիշ աստված, բացի Ինձնից, և եթե դուք ապստամբեք Իմ դեմ, ուրիշ օգնություն չեք ունենա: Սակայն, եթե արձագանքեք Ինձ, երկրի վրա ոչ մի ուժ չի կարող ձեզ գերեվարել»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

107:13 «ապա ՏԻՐՈԶՆ աղաղակեցին» Տես՝ Սաղմ. 107:6-ի գրառումը:

❖ «Նա էլ նրանց փրկեց իրենց տառապանքներից» Սա երբայերեն «փրկեց» (BDB 446, KB 488, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) բառն է, որը ՀԿ-ում հիմնականում նշանակում է ֆիզիկական ազատագրում: «Փրկեց» տերմինը հոգևոր իմաստ է ստանում ՆԿ-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ տերմին)

107:14 Սա կրկնում է Սաղմ. 107:10-ում նշված բանտարկյալների ֆիզիկական փրկությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԹԱՆՁՐ ԽԱՎԱՐ

107:15 Սա կրկնում է Սաղմ. 107:8-ի շեշտադրությունը: Այն դարձյալ կրկնվում է 107:21 և 31-ում շեշտադրության համար:

«Սարդկան որդիներ» (բառացի՝ “*ben Adam*”) արտահայտության կիրառությունն ունի տիեզերական տարր: ՅԱՀՎԵՆ՝ Իր նմանությամբ մարդկության Արարիչը (տես՝ Ծննդ. 1:26-27), նաև ամբողջ մարդկության փրկիչն է (տես՝ Ծննդ. 3:15, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Իսրայելի համար հույս կա. բոլորի համար կա հույս:

107:16 «Քանի որ պղնձե դռները փշրեց ու երկաթե նիզերը խորտակեց» Նրանց օրերում այս մետաղական դարպասները համարվում էին հավանական ամենամուր մարդկային խոչընդոտները: Սա Աստծո զորության և կարողության նկարագրությունն է, որի համար ոչ մի խոչընդոտ գոյություն չունի Իր ժողովրդին օգնության հասնելու համար (այսինքն՝ Ես. 45:1-2):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 107:17-22

¹⁷Անմիտներն իրենց չար ճամփի

Ու իրենց անօրենությունների պատճառով նեղություն կրեցին:

¹⁸Նրանց անձը զզվեց բոլոր տեսակի կերակուրներից

Ու մինչև մահվան դռները հասան:

¹⁹Այն ժամանակ ՏԻՐՈԶՆ աղաղակեցին իրենց նեղության մեջ,

Ու փրկեց նրանց իրենց տառապանքներից:

²⁰Իր խոսքն ուղարկեց և բժշկեց նրանց

Ու կործանումից ազատեց նրանց:

²¹Երանի՛ թե մարդիկ գոհություն մատուցեին ՏԻՐՈԶԸ

Իր բարության ու Իր հրաշալի գործերի համար,

Որ մարդկանց որդիների համար կատարեց:

²²Թող գոհության պատարագներ մատուցեն

Ու Նրա գործերը ցնծությամբ պատմեն:

107:17ա Այս պարբերության առաջին տողը մի քանի տարբեր կերպերով է դիտարկվել՝

1. MT և անգլերեն մի շարք թարգմանություններ տալիս են «հիմարներ» (BDB 17)
2. NRSV շտկում է սա որպես «հիվանդ» (BDB 317)

3. LXX և Փեշիտտան ունեն երբայերենի այլ տեքստ. «Նա օգնեց նրանց դուրս գալու իրենց մեղքերի ճանապարհից»:
UBS Տեքստային Նախագիծը՝ էջ 384, առաջին տարբերակը գնահատում է “B”:

107:17բ «նեղություն կրեցին» Սա մահվան տանող հիվանդության նկարագրություն է: Սակայն, այս բայական ձևը ոչ թե ԿՐԱՎՈՐԱԿԱՆ է, այլ ԱՆԴՐԱԴԱՐՁՎՈՂ, և այն պետք է թարգմանվի «նրանք իրենց նեղություն տվեցին» (BDB 776, KB 853, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ): Այսպիսի մի խոսք կա, որտեղ ասվում է, որ մենք չենք կոտորում Աստծո օրենքները, այլ մենք կոտորվում ենք Աստծո օրենքների վրա: Այս ձևակերպման մեջ մեծ ճշմարտություն կա Աստծո բարոյական տիեզերքի մասին:

107:18 Սա դաժան հիվանդության պատճառով ախորժակի անկման մասին խոսելու կերպ է: Այս համարում *Շեղող* նկարագրված է որպես ամբողջ կամ դարպասներով քաղաք (տես՝ Հոր 38:17), սակայն ըստ երևույթին այս նկարագրությունը խոսում է մահվան մասին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ

107:19 Այս արտահայտությունը կրկնվում է Սաղմ. 107:6,13,19 և 28-ում: Այն Դատավորների շրջանի հիշեցում է:

107:20 «Իր խոսքն ուղարկեց ու բժշկեց նրանց» Ուշադրություն դարձրեք այստեղ արտասանված խոսքի գործողության վրա շեշտադրությանը: Ճիշտ ինչպես Ծննդոց 1-ում, Աստված խոսեց և եղավ: Աստծո խոսքի գործողության վրա այս նույն շեշտադրությունը կարելի է տեսնել Եսայի 55:11-ում: ՀԿ-ում, երբ Աստված խոսում էր, Նրա խոսքերը դառնում էին անկախ, ինքնաբավ եղելություն:

«Բժշկեց» (BDB 950, KB 1272, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) բառի շուրջ պարզապես մի մեկնություն: Այն կարող է նկատի ունենալ ֆիզիկական բժշկություն, սակայն հաճախ նկարագրությունը հոգևոր վերականգնման մասին է (տես՝ Սաղմ. 103:3, տես ամբողջական գրառումը այնտեղ. Ես.1:5-6, 53:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ **«ու կործանումից ազատեց նրանց»** «Կործանում» (բառացի՝ «գուրք», BDB 1005) ԳՈՅԱԿԱՆԸ հազվադեպ արմատ է և ՀԿ-ում միայն երեք տեղ է նշվում:

1. այստեղ
2. Առակ.28:10-ում
3. Ողբ 4:20-ում

Այն կարող է նկատի ունենալ՝

1. թշնամիների հնարքներն ու ծրագրերը (կենդանու թակարդներ)
2. մահ (*Շեղող* որպես գուրք)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԵՈՒ

107:21 Այս արտահայտությունը կրկնվում է Սաղմ. 107:8,15,21,31-ում: Տես ամբողջական գրառումը Սաղմ. 107:8-ում:

107:22 Այս համարը շեշտադրում է Երուսաղեմում տաճարի երկրպագությունը, ինչպես Սաղմ. 107:32-ը: Հնարավոր է, որ 107:2ա նույնպես արտացոլում է տաճարում տեղի ունեցող ծես:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 107:23-32

²³Որոնք նավերով ծովն են իջնում

Ու մեծ ջրերում աշխատում,

²⁴Տեսնում են ՏԻՐՈՋ գործերը

Ու Նրա հրաշալիքները խորունկ տեղում:

²⁵Նա հրամայում է ու հողմ ու փոթորիկ է բարձրացնում,

Ու բարձրանում են նրա ալիքները:

²⁶Մարդիկ երկինք են ելնում ու խորխորատներն են իջնում .

Նրանց անձերը հալումաշ են լինում նեղությունից,

²⁷Հարբած մարդու պես ետ ու առաջ են գնում ու երերում,

Եվ նրանց ամբողջ իմաստությունն անհետանում է:

²⁸Այն ժամանակ ՏԻՐՈՋՆ են աղաղակում իրենց նեղության մեջ,

Ու փրկում է նրանց իրենց աղետալի վիճակից:

²⁹Մրրիկը հանդարտեցնում է, ու ալիքները դադարում են:

³⁰Ուրախանում են, երբ փոթորիկը դադարում է,

Եվ նրանց իրենց ցանկացած նավահանգիստն է առաջնորդում:

³¹Երանի՛ թե մարդիկ գոհություն մատուցեին ՏԻՐՈՋԸ

Իր բարության ու հրաշալի գործերի համար,

Որ արեց մարդկանց որդիների համար:

³²Թող բարձրացնեն Նրան ժողովրդի հավաքի մեջ

Ու երեցների ժողովում թող փառաբանեն Նրան:

107:23 «Որոնք նավերով ծովն են իջնում» Հրեաները շատ հաճախ չէին մասնակցում ծովագնացության հետ կապված գործերի: Մի օրինակ կա 3 Թագ. 9:27,28-ում, որտեղ Սողոմոնը Աքաբայի Ծովածոցում մի նավատորմ է կառուցում, սակայն նա դատապարտվում է դրա համար և այն փաստի, որ Փյունիկեցիներն էին կառուցում և ղեկավարում այդ նավերը: Քողարկված մի ակնարկ կա հրեական ցեղերից մեկի մասին, որը Դատ. 5:17-ում ներգրավված է եղել ծովային գործերում, սակայն դարձյալ, սա ավելի շուտ ծածուկ կամ անհայտ է իր նշանակությամբ: Հրեաները պարզապես շատ չէին խառնվում ծովային գործերի մեջ: Սաղմ. 107:23-32-ի տեսարանը ծովում ուժգին փոթորիկն է, որը սարսափազդու էր անապատի բնակիչների համար:

Սա փրկության չորրորդ վարկածային իրադրությունն է. տես՝ Համատեքստային Հասկացություններ, Ե .

107:25-27 Սրանք ծովային հիվանդությունների և վախի տեսարաններ են ասոցացված ծովի վրա փոթորկի հետ: Այն նաև շեշտադրում է ՅԱՀՎԵԻ վերահսկողությունը ջրի վրա (տես՝ հհ. 29,33,35):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՋՐԵՐ

107:26 «երկինքները» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԵՐԿԻՆՔՆԵՐ

❖ «անձ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

107:27 Երկրորդ տողում գտնվող բառացի «անհետանալ» ԲԱՅԸ (BDB 118, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ) արտահայտում է հանկարծակի ինչ-որ բանի կորձանման նշանակություն (այսինքն՝ ծովը կուլ է տալիս՝ անհետացնում է նավին փոթորկի մեջ):

KB 135 III վերցնում է լինել բայը՝ «ցույց տալու մարդուն շփոթված»: Սա միակ օրինակն է այս արմատի, որը ներկայացված է *Hithpael* ձևի մեջ, չնայած այն կարելի է գտնել՝

1. որպես *Niphal* Եսայի 28:7-ում

2. *Piel* Եսայի 3:12, 19:3-ում

3. *Pual* Եսայի 9:16-ում

Մի քանի անգլերեն թարգմանություններ այս ԲԱՅԸ դիտարկում են որպես փորձառու նավաստիների անկարողության հետ կապված, որոնք ի գորու չեն օգտագործել իրենց ծովային գիտելիքները, որպեսզի փրկվեն:

107:28 Սա ինձ հիշեցնում է Հովնանի գրքում նավաստիների մասին:

107:30 «իրենց ցանկացած նավահանգիստը» Սա բառացի նշանակում է՝ «իրենց ցանկացած քաղաքը»: «Քաղաքի» (BDB 562, KB 568) համար օգտագործվող այս տերմինը միայն այստեղ է գտնվում: Անգլերեն շատ թարգմանություններ տալիս են «նավահանգիստ» կամ «ապաստարան»: Ես կարծում եմ սա զուգահեռվում է Սաղմ. 107:4 և 36-ի «բնակեցված քաղաքի» հետ: Սա հանգստի, պաշարի, ապահովության վայր էր: Այն կարող է հակադրվել «մահվան դարպասների» հետ (այսինքն՝ *Շեռի*, մեռյալների քաղաքը): Ի վերջո միայն Աստված է այդ վայրը: Նա է միակ հավիտենական քաղաքը (տես՝ Եբր. 11:10):

107:31 Այս համարը առաջարկում է փառաբանել ՅԱՀՎԵԻՆ Իր՝

1. ուխտի հավատարմության համար (այսինքն՝ *hesed*, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ)
2. փրկագործությունների համար (բառացի՝ «հրաշքների», տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԲԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ, տես՝ հհ. 8,15,21,31):

107:32 «ժողովրդի հավաք» Սա Իսրայելի համար օգտագործվող ուխտին առանձնահատուկ արտահայտություն է: Սա անդրադառնում է տաճարի երկրպագությանը:

❖ **«երեցների ժողովում թող փառաբանեն Նրան»** Որոշ ենթադրություններ են եղել, որ Սաղմ. 107:33-43 պարունակում է՝

1. ժողովրդի խոսքեր ուղղված երեցներին
2. երեցների պատասխանը նրանց խոսքերին

Ինչ էլ որ լինի հետևյալ համարների ստույգ էությունը, այս առաջարկները չեն համապատասխանում Սաղմ. 107:4-32-ում հաստատված քառակի ձևաչափի հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԵՑՆԵՐ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 107:33-38

³³Գետերն անապատի է վերածում,

Իսկ ակնադբյուրները՝ չոր հողի .

³⁴Պտղաբեր երկիրը՝ աղի վայրի՝

Նրա բնակիչների չարության պատճառով:

³⁵Անապատը փոխարկում է ջրառատ լճի,

Իսկ չոր գետինը՝ ջրավազանների:

³⁶Եվ սովյալներին այնտեղ է բնակեցնում,

Որ բնակելի քաղաք հաստատեն,

³⁷Ու դաշտերը ցանեն ու այգիներ տնկեն

Ու առատ բերք ստանան:

³⁸Օրհնում է նրանց, ու նրանք խիստ բազմանում են,

Ու նրանց անասունները չի պակասեցնում:

107:33-43 Աստծո դատաստանը վերականգնելու և առատության նպատակով է: Այդ նպատակը Աստծո ժողովրդի վերականգնումն է և նրանց օրհնությունը պետք է լինի աշխարհին վկայություն (տես՝ հ. 8-ի գրառումը): Սա շատ նման է Դևտ. 26:1-13 և 2 Օրինաց 27-30-ի օրհնության և անեծքի բաժնին:

107:38 «օրհնում է նրանց» Սա «օրհնել» արմատի (BDB 138) կիրառությունն է, որը ցույց է տալիս ՅԱՀՎԵԻ ցանկությունը՝

1. երկիրը լցնելու (տես՝ Ծննդ. 1:28, 9:1,7)

2. բազմացնելու Իր ընտրյալ ժողովրդի թվաքանակը (այսինքն՝ Ծննդ. 48:4,16, Ելից 1:7, Ղևտ. 26:9, 2 Օր. 7:13, 28:4,11):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 107:39-43

³⁹Նորից նվազում են ու ցածրանում բռնությունից,

Նեղությունից ու վշտից:

⁴⁰Անարգանք է թափվում իշխանների վրա

Ու նրանց թափառեցնում անապատում, ուր ճամփա չկա:

⁴¹Բայց աղքատին բարձրացնում է խեղճությունից

Ու նրանց ընտանիքները ոչխարի հոտերի պես է դարձնում:

⁴²Արդարները տեսնելու են և ուրախանալու,

Բայց ամեն անօրենություն փակելու է իր բերանը:

⁴³Ով իմաստուն է ու պահում է այս բաները,

Նա հասկանալու է ՏԻՐՈՋ գրթասիրությունը:

107:40,41 «Իշխաններ . . . աղքատ» Դերերի հակադարձումը մարդկանց հետ Աստծո մոտեցմանն առանձնահատուկ նշաններից է: Իսրայելի առաջնորդները, ովքեր մոլորցնելում էին իրենց ժողովրդին, այժմ դատվում են և աղքատն ու հասարակության մեջ նվաստը փրկության, առողջության և ապահովության վայրն են տարվում:

Որոշ համատեքստերում «նեղյալը՝ աղքատը» նկատի առնված որպես Աստծո հավատարիմ հետևորդը:

107:43ա Սա նման է ՆԿ-յան «Նա ով ականջ ունի, թող լսի» արտահայտությանը: Աստված հայտնել է Իր ծրագիրը Իր ժողովրդի համար: Այժմ Իր ժողովուրդը պետք է հավատքով պատասխանի: Սակայն, անգամ իրենց հավատքի պատասխանով հանդերձ, կարևորը նրանց հավատարմությունը չէ, այլ Աստծունը (տես՝ Եզեկ . 36:27-36):

107:43բ Սա հնարավոր է նկատի ունի 2 Օր. 32:7-ը: Ուխտի հնազանդությունը օրհնություններ է բերում (Սաղմ . 107:33-38), սակայն անհնազանդությունը՝ անեծքներ (տես՝ Սաղմ . 107:39-40):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեգույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ են որոշ մեկնաբաններ կարծում, որ Սաղմոս 105, 106 և 107 իրար կապված, չնայած որ դրանք գտնվում են Սաղմոսների տարբեր գրքերում (բաժիններում):
2. Ո՞րն է եբրայերենի *hesed* տերմինի կարևորությունը՝ թարգմանված «բարեգթություն»՝ Նոր Ամերիկյան Ստանդարտ թարգմանության մեջ, «ողորմություն»՝ Քինգ Ջեյմս թարգմանության մեջ, որն այդքան հաճախ հանդիպում ենք այս Սաղմոսում:
3. Համաձայն Սաղմ . 107:2,3-ի ո՞րն է այս Սաղմոսի ենթադրյալ պատմական միջավայրը:
4. Նկարագրե՛ք Սաղմ . 107:4-32-ում գտնվող նեղության քառապատիկ ձևաչափը: Արդյո՞ք ուխտագնացները բախվում էին այս բառացի խնդիրների հետ մինչև ճամփորդում էին դեպի Երուսաղեմ, թե՞ հանդիսանում են այս կյանքի խնդիրների հետ կապված փոխաբերություններ:

5. Ինչո՞ւ են Սաղմ. 107:11,17, և 34 այդքան կարևոր, երբ այն առնրվում է Իսրայելի ունեցած խնդիրներին:
6. Ինչպե՞ս են մեղքը և հիվանդությունը կապված հրեական մտածելակերպի մեջ (տես՝ Սաղմ. 107:17, Հովհաննես 9:2, Հակոբոս 5:13):